«Էդիթ Պրինտ» հրատարակչություն

Ավարտական հետազոտական աշխատանք

Թեմա՝ Ազգային տոների, ծեսերի կազմակերպման առանձնահատկությունները կրթական գործընթացում

Հաստատություն՝ Երևանի հ. 53 մսուր-մանկապարտեզ

Դաստիարակ՝ Բորյան Անահիտ

Ղեկավար՝ Ավետիսյան Ժաննա

Երևան-2023

Բովանդակություն

Ներածություն ----------3

Ուսուցման մեթոդներ ----------4

Հայ Ազգային ծեսերն ու տոները ----------9

Վարդավառն ու Աստղիկ Աստվածուհին ----------10

Սուրբ Զատիկն ու Անահիտ Աստվածուհին ----------13

Նոր Տարի ----------17

Տեառնընդառաջ ----------19

Եզրակացություն ----------20

Օգտագործված գրականության ցանկ ---------- 21

Ներածություն

Հայոց ազգային տոները տարբեր ժամանակներում տարբեր դրսևորումներ և վերաիմաստավորումներ են ունեցել: Սակայն այս տոների արմատներն այնքան խորն են եղել ժողովրդի ինքնագիտակցության մեջ, որ ժամանակի կրոնաքաղաքական փոփոխությունները նույնպես չեն կարողացել ազդել դրանց վրա: Հայկական մշակույթը հնուց ի վեր, մինչ օրս էլ, աչքի է ընկնում իր բազմաթիվ և յուրօրինակ ազգային տոներով: Մենք բոլորս այս տոները նշում ենք, որպես քրիստոնեական և եկեղեցական տոներ, սակայն այս տոների մեծ մասը գալիս է դեռևս նախաքրիստոնեական ժամանակներից:

Ֆիզիկական ակտիվությունը ապահովում է երեխայի օրգանիզմի կենսա-գործունեությունը: Դրանով է պայմանավորված ֆիզիկական գործունեության կարևորությունը մանկապարտեզում: Նախադպրոցական տարիքի երեխաների զարգացման գործում ֆիզիկական դաստիարակության համար կարևոր տեղ են գրավում շարժական, ազգային, ծիսական խաղերը: Ազգային ծեսն այն միջավայրն է, որտեղ բոլորը, ազգի մշակույթը յուրացրած, ինքնադրսևորվելու, ստեղծագործելու, որոնելու, հայտնաբերելու, երևակայելու, իմացածը կիրառելու լայն հնարավորություն ունեն: Այն մանկան ընդհանուր զարգացման համար ստեղծում է պարարտ հող՝ մի շարք խնդիրների լուծման համար: Ծեսը, որպես միասնական, բազմաբնույթ, ինտեգրված գործունեություն, նպաստում է նախակրթարան, ընտանիք, համայնք արդյունավետ համագործակցությանը: Մանկապարտեզում ծեսի միջոցով սանի զարգացման գործընթացն արդյունավետ է, այն իր մեջ ոչ միայն ներառում է երեխայի համար կարևոր գործունեության ձևերը, այլև իրագործվում է լավագույն ազգային նյութով:

Ուսուցման մեթոդներ

Նախադպրոցական դիդակտիկայում կիրառվում են ժամանակակից խաղային և ակտիվ ուսուցման մեթոդներ:

Խաղային մեթոդներ

Նախադպրոցական ուսուցման պրակտիկայում առավել արդյունավետ են խաղային մեթոդները: Խաղային մեթոդների առավելությունները պայմանավորված են խաղային մթնոլորտի բարձր հուզականությամբ, երեխայի համար խաղի բնական և հոգեհարազատ բնույթով:

Ուսուցանող են խաղի բոլոր տեսակները: Սակայն ուսուցմանը հատուկ ուղղված են դիդակտիկ խաղերը, որոնք կատարում են երկու կարևորագույն գործառույթ.

- խթանում են նոր գիտելիքների արդյունավետ յուրացումը,
- նպաստում են գիտելիքների ամրապնդմանը, գործածմանը և կատարելա-գործմանը:

Հետաքրքիր խաղային մեթոդէ երևակայական իրադրությունների խաղարկումը, որի ընթացքում երեխայի գիտելիքները և կարողությունները ձեռք են բերվում պարտադրված դերային գործողությունների միջոցով:

Ուսուցման խաղային մեթոդները խաղային հնարների բազմազանության հաշվին ունեն տարբերակված կիրառության լայն հնարավորություններ և հաջողությամբ օգտագործվում են նախադպրոցականին բոլոր ուղղություններով զարգացնելու ընթացքում:

Զարգացման հրաշալի մեթոդ է խաղի յուրաքանչյուր տեսակ:

Ուսուցման գործնական մեթոդները

Նախադպրոցականի ուսուցման գործընթացում այսօր առաջատար են համարվում ուսուցման գործնական մեթոդները, որոնց խմբին դասվում են տարատեսակ

- վարժությունները,
- փորձերը, փորձարարությունը (հետազոտումը),
- մոդելավորումը:

Վարժությունները լինում են տարբեր բնույթի՝ընդօրինակող, կառուցողական և ստեղծագործական: Ուսուցանող, աստիճանաբար բարդացող վարժություններն իրենց ուրույն տեղն են զբաղեցնում նախադպրոցականի մտավոր դաստիարակության համակարգում: Վարժությունները հետաքրքրում են երեխաներին նրանով, որ դրանք օգտագործվում են ուսուցման ընթացքում որպես խաղային, պրակտիկ կամ աշխատանքային գործունեության մասնաբաժիններ և նպաստում են մտավոր զարգացմանը միջնորդված եղանակով:

Փորձերի և փորձարարության դերը անգնահատելի է ժամանակակից դիդակտիկայում: Փորձարարության ցանկությունը բնորոշ է նախադպրոցական տարիքի երեխաներին, նրանք միշտ պատրաստ են ուսումնասիրելու երևույթների ներքին հատկություններն ու կապերը զանազան փորձերի, փորձարկումների միջոցով: Փորձարարությունը երեխայի որոնողական գործունեության յուրահատուկ ձև է, ներքին ակտիվության վառ դրսևորում: Երեխաների որոնողական, փորձարարական գործունեությունը պրոբլեմային ուսուցման հիմնական եղանակն է:

Մոդելավորումը համեմատաբար նոր մեթոդ է, որի հիմքում ընկած է ուսուցանվող նյութի ներկայացումը պայմանական նմուշի՝ մոդելի ձևով: Մոդելը ուսուցանվող օբյեկտի բոլոր հատկությունները ամփոփող պատկերն է՝ ներկայացված փոխարինման սկզբունքով: Օրինակ, խմբասենյակը փոխարինվում է սենյակի

հատակագծի մոդելով: Կամ, հեքիաթը ներկայացվում է սխեմատիկնկարի, պատկերագրի (պիկտոգրամի) ձևով:

Նախադպրոցականի ուսուցման գործընթացում օգտագործվում են մոդելների հետևյալ ձևերը.

- Առարկայական մոդելներ՝ ուսումնասիրվող առարկան պատկերող նկար կամ նմուշ-խաղալիք,
- առարկայա-սխեմատիկ մոդելներ՝ ուսումնասիրվող երևութը բնութագրող ընդհանրացված պատկեր կամ սխեմա (օրինակ, բնության օրագիրը, ուր բնության երևույթները արտահայտվում են սիմվոլներով),
- վերացական մոդելներ՝սխեմաներ, դիագրամներ, պիկտոգրամներ (սխեմատիկ նկարների շարք):
- Պատկերագրի (պիկտոգրամայի) օրինակ է հեքիաթի մոդելավորումը: Հեքիաթի պիկտոգրամայի տարբերակը առաջարկվել և նկարագրվել է Օ.Մ. Դյաչենկոյի կողմից: Նա առաջարկում է քայլերի հետևյալ հաջորդականություն. Հեքիաթը ընթերցվում է և բաժանվում է տրամաբանական մասերի, դրանց երեխան տալիս է անուններ՝ վերնագրում է, որից հետո փորձում է նկարել յուրաքանչյուր մասի ընդհանուր իմաստը: Արդյունքում, ստացվում է պայմանական նկարների հաջորդականություն՝պիկտոգրամ կամ հեքիաթի ապերցեպտիվ սխեմա:
- Երեխայի մտավոր զարգացման գործում մոդելավորման մեթոդի դիդակտիկ հնարավորությունները բազմաթիվ են և բազմանպատակ: Մոդելավորման մեթոդը ուսուցման ամենահեռանկարային մեթոդներից մեկն է:

Ուսուցման գործընթացը մանկապարտեզում կազմակերպվում է երեք հիմնական ձևերով:

Ուսուցման կազմակերպման դեռևս ամենատարածված ձևը պարապմունքն է: Պարապմունքների կազմակերպումը մեծ վարպետություն է պահանջում մանկավարժից: Այսօր առավել արժեքավոր են համարվում համալիր բնույթի պա-րապմունքները, որոնց ընթացքում դիդակտիկ խնդիրները լուծվում են երեխաներին ներգրավելով գործունեության տարբեր ձևերի մեջ: Մշակվում են նաև ինտեգրված պարապմունքներ, որոնց ընթացքում երեխային ներկայացվում են նույն դիդակտիկ նպատակին ծառայող գիտելիքներ տարբեր ոլորտներից:

Ուսուցման կազմակերպման բավականարդյունավետ ձև է էքսկուրսիան, որը նախապես պլանավորվում և անցկացվում է հատուկ մեթոդիկայով: Ուսուցանող էքսկուրսիան, ինչպես և պարապմունքը, բաղկացած է երեք մասից. նախապատրաստական, հիմնական և ամփոփող:

Նախադպրոցական դաստիարակության հայեցակարգի համաձայն, նախադպրոցականի ուսուցման կազմակերպման ամենաարդյունավետ, հետևաբար հիմնական ձևը դիդակտիկ խաղն է, որն աստիճանաբար փոխարինելու է ուսուցման կազմակերպման ,դասային ձևերը:

Ուսուցման գործընթացը շարունակվում է նաև պարապմունքներից և դիդակտիկ խաղերից դուրս՝ ազատ ժամանցի, հանդեսների և տոնակատարությունների, զբոսանքի, խաղերի ընթացքում: Ուսուցման կազմակերպման ավանդական ձևերը պարբերաբար կատարելագործվում են, մշակվում են և մանկապարտեզ են մուտք գործում ուսուցման կազմակերպման նոր ձևեր:

Դրանցից են.

- Ինտելեկտուալ խաղերը,
- խաղ-բանավեճերը,
- խաղ-մրցույթները:
- Ուսուցման գործընթացը նախադպրոցական տարիքում ուղղված է երեխայի անձի զարգացմանը, այն լրացնում է նախադպրոցականի դաստիարակության բարդ գործընթացին:
- *Նախադպրոցական տարիքի երեխաների զարգացման համար անհրաժեշտ միջավայրը*
- Նախադպրոցական երեխաների զարգացման և կրթական պետական չափորոշիչները սահմանում են երեխաների կարողությունների և գիտելիքների վերաբերյալ ակնկալիքները՝ պայմանավորված տարիքային բնականոն զարգացման և ազգային-մշակութային առանձնահատկություններով:
- Երեխաների զարգացման չափորոշիչները նկարագրում են, թե ինչպետք է իմանա և ինչ կարողանա անել երեխան տվյալ տարիքում: Այս փաստաթուղթը մանկավարժներին և ծնողներին կարևոր տեղեկություններ է տալիս զարգացման տարբեր ոլորտներում տվյալ տարիքի երեխաների զարգացմանը և ուսումնառությանը առնչվող ակնկալիքների վերաբերյալ:
- Չափորոշչային պահանջների հիմքում ընկած է այն համոզմունքը, ո ռերեխաների ուսումնառությունը և զարգացումը բազմակողմանի է, քանի որ ֆիզիկական զարգացման հետ մեկտեղ զարգանում է նաև երեխայի խոսքն ու լեզուն, զգացմունքները, սոցիալական շփման և իմացական հմտությունները և այլն: Հետևաբար, բոլորոլ որտները կարևորեն երեխայի համակողմանի զարգացման համար և պետք է հավասարապես արժևորվեն:

ՀԱՅ ԱԶԳԱՅԻՆ ԾԵՍԵՐՆ ՈՒ ՏՈՆԵՐԸ

Հայ երեխային հայեցի կրթությունը և դաստիարակությունն այնքան են անհրաժեշտ, որքան մեսրոպյան այբուբենը՝ հայոց լեզուն իմանալու համար:

Այս հետազոտական աշխատանքում ներկայացնում եմ մի քանի ազգային տոն, որոնք երկարճանապարհ են անցել հեթանոսությունից մինչև քրիստոնեություն:

Առանձնացրել եմ այն տոներն ու ծեսերը, որոնք մենք տոնել ու տոնում ենք մանկապարտեզում՝ երեխաների հետ միասին:

Կներկայացնեմ նաև մեր հանդեսներից ու առօրյա պահերից մի քանի հատված ու նկարներ:

Վարդավառ

Վարդավառը քրիստոնյա աշխարհում տարածված է, որպես Քրիստոսի պայծառակերպության օր, որը նշվում է Քրիստոսի հարությունից հետո 98-րդ օրը: Տոնի ժամանակ ժողովրդական սովորույթներից է միմյանց վրա ջուր ցողելն ու աղավնիներ բաց թողնելը, որոնք խորհրդանշում են ջրհեղեղը, Նոյի ընտանիքի փրկությունը և Նոյի աղավնուն:

Հեթանոսական շրջանում Վարդավառ տոնը նվիրված է եղել Աստղիկին: Աստղիկը հայոց դիցարանում համարվում էր սիրո և գեղեցկության աստվածուհին, ինչպես նաև ամպրոպի աստված Վահագնի սիրեցյալը:

Ըստ ավանդազրույցի՝ Աստղիկը ծնվել է ծովի փրփուրներից և որտեղ որ քայլում էր, նրա ոտքերից կաթկթացող արյան հետքերի տեղում վարդեր էին բուսնում: Ատղիկ աստվածուհին նաև երկնքից վարդեր շաղ տալով հայ աղջիկներին օժտում էր աստվածային գեղեցկությամբ: Վարդավառը հայոց աշխարհում ամենասիրելի տոներից մեկն էր և տոնվում էր մեծ շուքով: Այդ օրը բոլորը միմյանց վրա ջուր էին ցանում և իրար սեր ու գեղեցկություն տալիս: Տոնի ընթացքում նրանք փառաբանում էին Աստղիկին և միմյանց նվիրում տոնի խորհրդանիշը՝ վարդը:

Ըստ արիական ավանդույթներից մեկի՝ ստորգետնյա աստվածն առևանգում է Աստղիկին, որի հետևանքով արիների միջից վերանում են սերն ու գեղեցկությունը, և նրանց հոգիներում բույն է դնում ատելությունը: Բոլորը դառնում են տգեղ ու անգութ: Բայց Վահագնը, հաղթելով հրեշին, ազատում է Աստղիկին և, շրջելով Հայոց աշխարհով, արիներին օծում է վարդաջրով, վարդավառ է սարքում և նրանց վերստին օժտում աստղիկյան սիրառատությամբ:

Հնում մարդիկ Վարդավառը նշել են հիմնականում գետերի աղբյուրների կամ լճերի ափին՝այնտեղ, որտեղ ջուրն առատ է եղել: Վարդավառը նաև համարվել էր ջրի տարերքի պաշտամունքի տոն: Հայերի մեջ տարածված են ջրի և անձրևաբերության հետ կապված բազմաթիվ ծեսեր: Ջուրն ասոցացվել է նաև կապույտ գույնի հետ, որը և՛ պարզություն, և՛ մաքրություն է խորհրդանշում: Համաձայն շումերական աղբյուրների, հայերը Հայատիեզերական ջրերի և իմաստության աստծո որդիներն են, և ըստ ,Սասնա ծռեր էպոսի՝ հայերը պաշտել են ջուրը և իրենց համարել ջրից ստեղծված (Սանասար և Բաղդասար):

Վարդավառը համարվում է նաև խնձորի տոնը: Ընդունված սովորություն կար, որ մինչև Վարդավառ խնձոր չէին ուտում: Եվ Վարդավառին՝ խնձորի բերքի օրհնությունից հետո, նոր կարելի էր բերքը հավաքել և օգտագործել:

Ամեն տարի երեխաների հետ տոնում ենք Վարդավառը, երեխաներին ծանոթացնելով տոնի ծագմանն ու խորհրդին: Փորձում ենք մանկուց սերմանել սերը ազգայինի հանդեպ:

Նկարներ այս տարվա Վարդավառից

Սուրբ Զատիկ

Ամբողջ քրիստոնյա աշխարհում Զատիկը համարվում է Քրիստոսի հարության տոնը: Զատիկ անվանումն առաջացել է զատել բառից, որը նշանակում է զատվել և հեռանալ մեղքերից: Այն համարվում է եկեղեցական 5 տաղավար տոներից մեկը և այսօր ամբողջ քրիստոնյա աշխարհը տոնում է Քրիստոսի հարությունը, իրար հայտնելով ավետիսը՝ ,Քրիստոս հարյավ ի մեռելոց և ի պատասխան ստանալով՝ Օրհնյալ է հարությունը Քրիստոսի:

Սակայն հայոց աշխարհում զատկի տոնի արմատները շատավելի հին են: Զատիկը հնում համարվում էր գարնանացանի տոնը և նվիրված էր Անահիտ դիցուհուն, ով էլ հովանավորում էր մայր հողի բեղմնավորումը:

Զատիկն այստեղ կրկին ծագում է զատել բառից, քանի որ հենց Անահիտն էր, որ միմյանցից զատում էր բնության գույները: Ըստ ավանդության, երբ ջրհեղեղից հետո Արացիները բնակություն հաստատեցին Արարատյան դաշտում, նրանք նկատեցին, որ ծիլ ու ծաղկունքն ամբողջությամբ գորշությամբ է պատված: Եվ Արիների նահապետ Մանը զոհեր է մատուցում Անահիտ աստվածուհուն՝խնդրելով նրան, որպեսզի վանի գորշությունն ու իրենց վերադարձնի բնության հազարավոր գույները: Սակայն Անահիտը պատասխանում է, որ բնության գույները կարող է վերադարձնել միայն Հազարան հավքը, որը դյութիչ ձայնով երգում է և գույնզգույն ձվեր ածում, որով և նորոգվում են բնության գույները: Բայց այժմ հավքը պահվում է ստորգետնյա թագավորությունում, և Մանը պետք է ազատի և վեադարձնի նրան:

Մանը վերադառնում է Արարատ Հազարան հավքի հետ: Նա հավքին դնում է գետնին, և հավքը սկսում է երգել՝ բազմաթիվ գույներ ճառագելով և գույնզգույն ձվերածելով: Այնուհետև Անահիտը, գալով Արարատ, հավաքում է գույնզգույն ձվերը և շաղ տալիս ողջ դաշտով մեկ: Իսկ այնուհետև պատվիրում է հավքին բույն դնել Արարատ լեռան վրա և մշտապես գույներ տարածել երկրի վրա:

Եվ այդօրվանից Արիները սկսում են ուրախ վարել և ցանել հողը, իսկ մանուկները, ջահել հարսներն ու աղջիկները մինչև ուշ երեկո երգում, պարում ու ձվախաղ են խաղում:

Ի տարբերություն քրիստոնյաների, ովքեր զատկի ձվերը ներկում են մուգ կարմիր գույնով (Քրիստոսի թափած արյան գույնը), Արիացիները զատիկի ձվերը ներկում էին բոլոր հնարավոր գույներով: Նրանց համար զատկի տոնի իմաստը կյանքի վերածնունդը և բնության գարնանային զարթոնքը տոնելու մեջ էր:

Այս տարի Սուրբ Զատիկը տոնվեց ապրիլի 23-ին: Մենք մեծ շուքով, երգ ու պարով երեխաների հետ նշեցինք ամենակարևոր տոներից մեկը: Երեխաներին նկարների, խաղերի միջոցով ծանոթացրինք տոնին ու դրա ամբողջ զորությանը:

Տոնին նախապատրաստվելու համար նախապես երեխաները դաստիարակների օգնությամբ մատուցարանների մեջ ցանում են ցորեն: Դրա կանաչ ծիլերն օգտագործում են սպասք ձևավորելու և ածիկ պատրաստելու համար:

Զատիկին նվիրված հանդեսից հատված

Նպատակ

Նպատակն է հայեցի դաստիրակությունը, կրթությունը, գեղագիտականը, բարոյականը, ինչու չէ, նաև պատմական՝ անցյալը իմանալը, գնահատելն ու սովորելը: Դրանք հարստացնում են մանկական ու ջինջ հոգեաշխարհը:

Բուն հանդես

Տոնակատարությունը թե՛ մեծերի, և՛ երեխաների համար էր: Այդ իսկ պատճառով մանկապարտեզ էինք հրավիրել նաև ավագ տատիկներին: Այս միջոցառումը մեծ խորհուրդ էր պարունակում: Սովորաբար հանդեսներին ներկա են լինում մայրիկներն ու հայրիկները, և ստվերում են մնում հատկապես մեծ տատիկներիը: Կարևոր է, որ երեխան փոքրուց մեծարի, օգնի, հարկ եղած դեպքում նաև խնամի ընտանիքի ամենաավագներին:

Երեխաները ուռենու ճյուղերով և զատկի թեմայի նկարներով, կոլաժներով զարդարել էին դահլիճը և մուտքը: Սեղաններն ու աթոռներն այնպես են դասավորվում, որ ամեն սեղանի շուրջ նստելու են երկու տատիկներ և իրենց երկու թոռնիկները:

Երեխաներն ու հյուրերը միմյանց ավետում են << Քրիստոս հարյավ ի մեռելոց>> <<Օրհնյալ է Հարությունը Քրիստոսի>>: Երեխաները արտասանում են, հնչում են երգեր ու պարեր, ներկայանացվում է փոքրիկ թառերականացում. Դրանց հաջորդում է ներկված ձվերով խաղը և հանելուկների մրցույթը: Միջոցառումն ավարտվում է հայկական ժողովրդական պարով, որին մեծ խանդավառությամբ մասնակցում են թե՛ փոքրերը, թե՛ մեծերը:

Նկարներ այս տարվա Սուրբ Զատիկի տոնից

Նոր Տարի

Ըստ պատմական տվյալների, վաղ ժամանակներում հայերը Նոր տարին նշել են մարտի 21- ին՝ գարնանային գիշերահավասարի օրը: Բնությունը հարություն է առնում գարնան սկզբին, և հայ մարդը այդ օրն էլ դարձրել է Նոր տարի և նշել շքեղ տոնախմբությամբ՝ փառաբանելով բնության զարթոնքը, ակնկալելով բերքառատ տարի: Հայկական երկրորդ տարեգլուխը եղել է Նավասարդի 1-ը (օգոստոսի 11-ը) և տևել է մինչև սեպտեմբերի 9-ը: Ըստ ավանդության, Հայկ նահապետը Հայոց ձոր գավառում սպանել է բռնակալ Բելին՝ ազատություն պարգևելով իր տոհմին ու հետնորդներին: Ենթադրաբար դա տեղի է ունեցել մ. թ. ա. 2492թ. օգոստոսի 11-ին: Օգոստոսյան տոնը հայերը կոչել են Նավասարդ: Բառը կազմված է նավա /նոր և սարդ/ տարի բառերից և նշանակում է Նոր տարի: 18-րդ դարում, Սիմեոն Երևանցի կաթողիկոսի օրոք, որպես Նոր տարվա սկիզբ ընդունվեց հունվարի 1-ը (համապատասխանեցնելով քրիստոնեական մի շարք երկրներում ընդունված տարեսկզբի հետ): Միայն 20–րդդարի սկզբներից համընդհանուր դարձավ հունվարի 1-ը, որպես տարվա սկիզբ, տոնելը:

Նոր տարվա տոնական խնջույքը սկսվում էր դեկտեմբերի 31-ի ընթրիքով:

Նոր տարվա նախօրեին մանկապարտեզներում զարդարվում են Ամանորի խորհրդանիշ տոնածառներն ու ամանորյա շնչով ողողվում են բոլոր խմբասենյակները:

Երեխաները սովորում են ամանորյա երգեր ու ոտանավորներ: Տարեմուտին մանկապարտեզ է գալիս Ձմեռ Պապին և բոլորին հանձնում նվերներ:

Շատ կարևոր եմ համարում այսպիսի ընտանեկան տոների նշումը վաղ հասակից: Երեխաների մեջ մանկուց պետք է սերմանել ընտանեկան առիթների հանդեպ սերն ու ջերմությունը:

Տրնդեզ կամ Տեառնընդառաջ

Փետրվարի 14-ին, մանկապարտեզի բակում նշեցինք հայկական ավանդական Տեառնընդառաջը: Տեառնընդառաջը Հայ Առաքելական եկեղեցու տերունի և անշարժ տոներից է, որը նշվում է Սուրբ Ծննդից քառասուն օր հետո՝ փետրվարի 14-ին. Բայց տոնակատարությունները սկսվում են փետրվարի 13-ի երեկոյան: Ըստ ավանդույթի, այդ օրը պետք է պատրաստել աղանձ, դրան խառնել քաղցրեղեն, կոնֆետ, ինչպես նաեւ չրեղեն ու ընդեղեն եւ բաժանել արարողությանը ներկա մարդկանց: Տրնդեզի օրը սովորաբար եկեղեցիների բակում մեծ խարույկ են վառում: Այդ օրը շատ են նաեւ ամուսնացող զույգերը, ովքեր Աստծո օրհնությունը ստանալուց հետո թռնում են կրակի վրայով:

Եզրակացություն

Եվայսպես ուսումնասիրելով մասնագիտական գրականությունը, կատարելով փորձարկումները, եկանք հետևյալ եզրահանգմանը. Մշակույթի փոխանցման ձևերի մեջ կարևոր դեր ունեն ծեսերը: Տեխնոլոգիական խնդրի հաջող լուծումը պայմանավորված է ամենից առաջ այն մթնոլորտով և զարգացնող միջավայրով, որոնք ստեղծում է դաստիարակը հաշվի առնելով իր խմբի երեխաների անհատական, հոգեբանական առանձնահատկությունները և կարիքները: Ծեսերի իրականացումը կրթահամալիրում նպատակ ունի երեխաներին փոխանցել մշակութային ժառանգության բազմաշերտ արժեքները՝ նպաստելով երեխաների հայեցի դաստիարակությանը և իրական արժեքների ձևավորմանը: Ճիշտ է, մանկահասակ երեխաները ամբողջովին չեն կարող ընկալել ծեսերի իմաստն ու նշանակությունը, սակայն, նրանց ճիշտ ուղղորդելով և օրինակ ծառայելով, կարելի է շատ մեծ արդյունքների հասնել:

Օգտագործված գրականության ցանկ

1. Լալա Սարգսյան –Ուս. մեթոդական ձեռնարկ <<Խոսքի զարգացման պարապմունքները մանկապարտեզի կրտսեր 2-րդ խմբում /3-4 տարեկան/>>>
2. Լալա Սմբատյան -Տոնական Ղողանջներ
3. Կ. Ղազարյան, Ա.Աբաջյան, Է. Սամվելյան- Ուսումնական ձեռնարկ- Ուրախ տոները մանկապարտեզում
4. armgeo.am
5. liliazakharyan.wordpess.com